ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2020 թվական N 136-Ա

«ՖՐԱՆԿ ՄՅՈՒԼԼԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, հաշվի առնելով «Ֆրանկ Մյուլլեր» ընկերության տնօրեն Վարտան Սիրմակեսի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2020թվականի սեպտեմբերի 1-ին N 12232 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08062018-08-0004) Գործարանային փողոց N 2/6 հասցեի 4658,07 (չորս հազար վեց հարյուր հիսունուր ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի գործառնական նշանակության 0,1432 (զրո ամբողջ մեկ հազար չորս հարյուր երեսուներկու տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը 50 (հիսուն) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ֆրանկ Մյուլլեր» ընկերությանը՝ բնակարանային ֆոնդով և անհրաժեշտ ենթակառուցվածքներով բազմապրոֆիլ արհեստագործական համալիրի վերածելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (24)	Դեմ (0)	Ձեռնպահ (1)
Ս. Բալասանյան		Ա. Գրիգորյան
Ա. Ադամյան		
Հ. Կարապետյան		
Լ. Խաչատրյան		
Տ. Հովհաննիսյան		
Մ. Սահակյան		
Լ. Սանոյան		
Վ. Եդիգարյան		
Ա. Գրիգորյան		
Կ. Միքայելյան		
Տ. Փանոսյան		
Գ. Գրիգորյան		

Կ. Թաթարյան
Ս. Աստոյան
Ա. Խաչատրյան
Ռ. Սարգսյան
Ա. Մխիթարյան
Ս.Մարտիրոսյան
Լ. Բարսեղյան
Ա.Վարդանյան
Ա. Խաչատրյան
Գ. Մաթևոսյան
Ա. Ղարաղազարյան
Հ.Պողոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ

քաղաք Գյումրի
«08» սեպտեմբերի 2020 թվական